ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 23.09.2021թ.
Ժամը 12[30]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, մայոր Գ. Սարգսյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչության ավիացիոն տեխնիկական ունեցվածքի ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թունյան,
Բացակայում է՝ ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչության անօդաչու թռչող համակարգերի բաժնի շահագործման և կիրառման բաժանմունքի պետ, մայոր Ա. Սարգիսյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության ԳԿՎ ԳԿ 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Միքայելյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ.Միքայելյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ.Միքայելյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար թթվածնի, ազոտի և հակահրդեհային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ
2	«Լուարտ» ՍՊԸ
3	«Ֆայր Պրո» ՍՊԸ
4	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ.Միքայելյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

«Ֆայր Պրո» ՍՊԸ-ի, որի ներկայացված հայտի Հավելված 1-ում ներկայացված դիմում-հայտարարության մեջ՝ իրական շահառուների մասին աղյուսակում նշված չէ մասնակցի իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 23.09.2021թ. գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ: 27.09.2021թ. գնահատող հանձնաժողովը շարունակել է նիստը, սահմանված ժամկետում **«Ֆայր Պրո» ՍՊԸ**-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ.Միքայելյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ դրամ

Հ/Բ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Նախա-հաշվ գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների			
					անվանումը	գինը		Հ/Հ	անվանումները	Գումար	
						առանց ԱԱՀ	ընդհանուր գինը			առանց ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Թթվածին /բժշկական թթվածին/	մ³	7000	3500000	բանակցություն			1	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	2450000	294000
								2	«Լուարտ» ՍՊԸ	17500000	1750000
								3	«Ֆայր Պրո» ՍՊԸ	3150000	315000
2	Ազոտ /տեխնիկա-կան ազոտ/	մ³	8000	8000000	բանակցություն			1	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	4933333.33	592000
								2	«Լուարտ» ՍՊԸ	44000000	440000
3	Հակահրդե-հային նյութեր /Խլադոն 114B2/	կգ	100	5000000	բանակցություն			1	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	5000000	600000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնայի առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/ ճիշտ է համապատասխանում է հրավերի պայմաններին:

3.3 Քանի, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին և գնման ընթացակարգը

կազմակերպված է ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց գների նվազեցման նպատակով 29.09.2021թ. ժամը 16[30]-ին բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցների հետ կվարվեն միաժամանակյա բանակցություններ: Բանակցություններին ներկայացել է միայն **«Ֆայր Պրո» ՍՊԸ-ի** լիազորված անձը և 1-ին չափաբաժնի մասով նվազեցրել է իր կողմից առաջարկված գինը սահմանելով 2916666 ՀՀ դրամ: Մնացած գնային առաջարկները մնացել են անփոփոխ:

Հ/Բ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Նախա-հաշվ գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների			
					անվանումը	գինը		Հ/Հ	անվանումները	Գումար	
						առանց ԱԱՀ	ընդհանուր գինը			առանց ԱԱՀ	ընդհա-նուր գինը
1	Թթվածին /բժշկական թթվածին/	մ³	7000	3500000	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	2450000	2940000	1	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	2450000	2940000
								2	«Ֆայր Պրո» ՍՊԸ	2916666	2916666
2	Ազոտ /տեխնիկա-կան ազոտ/	մ³	8000	8000000	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	4933333.33	5920000	1	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ	4933333.33	5920000

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 3-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ.Միքայելյան)

4.1 **08.10.2021թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամին և վերջինիս անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ.Միքայելյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Գ. Սարգսյան
Գնահատող	Ա. Համբարյան
Գնահատող	Լ. Թունյան
Գնումները համակարգող	Լ. Միքայելյան